Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Մկրտիչ Արմեն

Մերժվածների հանդիպումը

1

Գրագիրն ատամները քչփորելուց և մի քանի անգամ կուշտ զկռտալուց հետո լեզուն պտտեցրեց լնդերով, հազաց և գրիչը ձեռքն առավ: Հայրս և մայրս, որ անթարթ նայում էին նրան, հուզված ժպտացին: Նույնիսկ ես, ութամյա երեխա, լարվեցի, զգալով, որ արդեն վրա հասավ հանդիսավոր վայրկյանը:

Գրագիրը գրիչը թաթախեց իմ աշակերտական թանաքամանի մեջ, մոտեցրեց թղթին և նախքան առաջին, ֆիգուրավոր տառն այնտեղ դրոշմելը, գրչածայրը մի քանի անգամ ֆռռացրեց թղթի վրա. կարծես գրիչն ուրուր լիներ, որը վառեկ փախցնելուց առաջ դեռ մի քիչ ճախրում է բակի վրա: Հետո հանկարծ թղթի վրա երևաց «խնդրագիր» բառի առաջին տառը՝ գրված ամենավայելուչ ռուսերեն ձեռագրով: Սպիտակ, մեծ խնդրաթերթը, որ լուռ և անհասկանալի ընկած էր սեղանի վրա, սկսեց ծածկվել պատկառելի և նույնքան անհասկանալի տողերով:

— Երեխայի անո՞ւնը,— պահանջեց գրագիրը քիչ հետո:

Հայրս տվեց իմ անունը: Եվ նույն րոպեին իմ գունատ, ոգևորված դեմքի վրայով անցավ անշուշտ մի հանդիսավոր արտահայտություն: Առաջին անգամն էր, որ իմ անունը գրվում էր ռուսերեն, գրվում էր այդքան գեղեցիկ ձեռագրով, այդպիսի նշանավոր թղթի վրա: Ոչ, այսօրվանից ես այլևս երեխա չեմ և հարկավոր է, որ ինձ մի քիչ ավելի խելոք պահեմ, թեև առանց այդ էլ ես երբեք աչքի չեմ ընկել հատուկ չարությամբ:

— Բայց,— հանկարծակի ասաց գրագիրը՝ գործն ավարտելով,— նորից եմ ասում, Գրիգոր ջան, Լազարյան ճեմարանում ընդունում են միայն և միայն հոգևորականների, բարեգործների և ուրիշ հասարակական գործիչների երեխաներին... Եթե տղայիդ չընդունեցին, այդ բանն իմ խնդրագրին չվերագրես: Ես կյանքումս այսքան գեղեցիկ ոճեր բանեցրած չունեմ: Իսկ ձեռագիրը՝ ինքդ ես տեսնում...

Եվ սեղանի վրայից վերցնելով մեծ թերթը, բռնեց հորս քթի առաջ:

— Քանի՞ տարի հետո պատասխան կստանանք,— անվստահ հարցրեց հայրս:

— Պատասխանը շուտ կգա: Իսկ երեխային, եթե խնդիրը հարգեցին, կընդունեն հետո: Կարգն այդպես է: Հիմիկվանից հերթ պիտի պահել…

Մայրս ջերմեռանդ հայացքով նայեց դեպի առաստաղ:

Ես նույնպես նայեցի:

2

Պատասխանն ստացվեց ութ ամիս հետո:

Մայրս, որ տանը լվացք էր անում, նայեց փոստատարի դեմքին, կարծես կասկածելով, որ նրան հայտնի է ծրարի բովանդակությունը, բայց նա չի ուզում ասել: Ապա, չհամարձակվելով թաց մատներով վերցնել նվիրական ծրարը, ձայն տվեց ինձ: Ես մոտ վազեցի և վերցրի:

Փոստատարը գնաց:

— Բաց անե՞մ, մայրիկ,— հարցրի ես անհամբերությամբ:

— Ամա՛ն, աստծու սիրուն, ձեռք չտաս: Քու ի՞նչ գործդ է... Գնա, հորդ ասա, թող գա…

Ես դուրս թռա և գլխապատառ վազեցի խանութ, որտեղ աշխատում էր հայրս: Ներս մտնելիս տեսա, որ նա զբաղված է: Նա նույնպես տեսավ ինձ, բայց ուշադրություն չդարձրեց ինձ վրա: Վաճառասեղանի մոտ խռնված գնորդներից ամեն մեկը մի բան էր ուզում, որը՝ դեյրացու, որը՝ «չամաշուրի» կտոր, որը՝ մահուդ, որը՝ «ամերիքան»… Հայրս իր օգնականի հետ հազիվ էր հասցնում դարակներից իջեցնել ցանկացած կտորեղենը:

— Արի տեսնեմ ինչո՞ւ ես եկել,— լսեցի հանկարծ խանութի տիրոջ՝ Ափոյենց Հովհաննես աղայի ձայնը դրամարկղից:

Ես մոտեցա: Նա հերթական գնորդից ստացավ փողը, հաշվեց, մատներով խփեց ինչ-որ կոճակների, պտտացրեց ինչ-որ կոթ: Լուրջ ու գործունյա չխկչխկաց, զնգզնգաց փայլուն, ավտոմատ դրամարկղը և դուրս նետեց չեկը:

— Լազարյան ճեմարանից նամակ ենք ստացել,— հայտնեցի ես:

Հովհաննես աղան, որ պատրաստվում էր նորից պտտացնել փայլուն մեքենայի կոթը, ապշած նայեց ինձ.

— Լազարյան ճեմարանի՞ց…

— Այո: Ինձ համար դիմում էինք տվել. ..

Նա այլևս ոչինչ չասաց և անցավ իր գործին: Երբ հաճախորդները սակավացան, ես մոտեցա հորս և ականջին ասացի նորությունը: Հայրս անմիջապես դուրս եկավ վաճառասեղանի ետևից:

— Հովհաննես աղա, Մոսկվայից.. .

— Գիտեմ,— ընդհատեց նա,— տղադ ասաց: Գնա, բայց շուտ արի:— Ապա, երբ մենք արդեն դուրս էինք գալիս, նա, վատ թաքցրած հեգնանքով, ավելացրեց,— մեծ գործեր ես բռնում, Գրիգոր: Իմ տղան Լազարյան ճեմարանի մասին չի էլ մտածում, իսկ դու… Աշխարհը փոխվել է:

Հայրս հարգալիր կանգ առավ՝ շարունակությունը լսելու, բայց որովհետև շարունակությունը չեղավ, նա նորից քայլեց:

— Դու գնա տուն, ես գրագրին վերցնեմ գամ,— ասաց նա ճանապարհին:

3

Գրագիրը ծրարը ձեռքն առավ, տնտղեց, հետո բռնեց լույսի դիմաց և գտավ դրա դատարկ պռունկը: Գրպանից հանեց գրչահատ դանակը, բացեց, զգուշությամբ կտրեց ծրարը: Հայրս՝ գործից շտապ տուն եկած, մայրս՝ լվացքը կիսատ թողած և թևերը վեր քշտած, ես՝ սրտատրոփ ու կարմրած դեմքով, սպասում էինք իմ ճակատագրի բացվելուն:

Գրագիրը բութն ու ցուցամատն զգուշությամբ կոխեց ծրարի մեջ, հանեց թուղթը, բաց արեց:

Մեր խնդրագիրն էր: Ետ էին ուղարկել…

Գրագիրը թուղթը թեք բռնեց և կարդաց նրա ծայրին կարմիր թանաքով արված մակագրությունը.

— Մերժված է: Մոսկվա, այսինչ ամի, ի ճեմարանս Լազարյան...

Հայրս նստեց:

Տիրեց խոր լռություն:

Իմ աչքերը լցվեցին վիրավորանքի դառն արցունքներով:

— Բոլորովի՞ն չեն ընդունում,— հարցրեց մայրս:

Գրագիրը նորից կարդաց:

— Մերժված է: Մոսկվա, այսինչ ամի, ի ճեմարանս...

— Էհ, ես ուշացա, գնամ,— ասաց հայրս ու վեր կացավ:

Ես զգացի, որ այլևս անպետք են թե՛ դիմումը, թե՛ ճեղքված ծրարը: Դիմումն ինձ հարկավոր չէր. այնտեղ իմ հասցեին վատ բան կար գրված, իսկ ծրարը, որ ընկած էր սեղանին, ես իսկույն վերցրի:

Հայրս մոտեցավ ինձ, շոյեց գլուխս.

— Ճակատագիրդ էր, բալա ջան…

Հեկեկոցս զսպած, ես ձեռքումս շուռումուռ էի տալիս ծրարը: Եվ հանկարծ նրա միջից սահեց ու ընկավ հատակին մի փոքրիկ, շատ փոքրիկ թղթի կտոր: Ես վայրկենապես կռացա, վերցրի, նայեցի…

— Ի՞նչ բան է,— արագ դեպի ինձ եկան հայրս ու մայրս:

Լուսանկար էր, ինձ նման մի փոքրիկ տղայի փոքրիկ լուսանկար:

Հայրս վերցրեց նայեց:

— Ռուս է,— ասաց նա:

— Ռուս է,— հաստատեց գրագիրը:

Ծնողներս հարցական նայեցին նրան:

— Սխալմամբ են ուղարկել,— բացատրեց գրագիրը,— խառնել են: Ուրիշ խնդրագրի մեջ է դրված եղել:

— Ուրեմն սովորաբար խնդրագրի հետ նկա՞ր էլ են ուղարկում:

— Այդպես է երևում,— ծամծմեց գրագիրը:

Մայրս գունատվեց.

— Բա մենք ինչո՞ւ չուղարկեցինք… Չլինի՞ դրա համար են մերժել...

Գրագիրը ներողամիտ ժպտաց և ցույց տալով ձեռքումս բռնած լուսանկարը, հարցրեց.

— Ապա սրա՞ն ինչու համար են մերժել: Լուսանկարը ոչ մի դեր չունի: Մարդու ծագումն ու դիրքը նրա լուսանկարն է: Ախր ես ձեզ դեռ այն ժամանակ ասացի...

Նա հորս հետ միասին ելավ դուրս: Իսկ մայրս, լվացքը մոռացած, անմիջապես նստեց և դառն արտասվեց.. .

4

Քանի՛ տարի շարունակ, քանի՛-քանի անգամներ ես նայում էի իմ բախտակցի փոքրիկ լուսանկարին և տխուր մտածում. քեզ էլ են մերժել, իմ անծանոթ, հեռու ընկեր.. . Քո խնդրագրի վրա նույնպես, դեռ հազիվ կարդացած, կարմիր թանաքով խազմզել են համառոտ մակագրությունը: Եվ վերադարձնելիս, քո խնդրագրի հետ նույնպես, երևի ուղարկել են քեզ անծանոթ մի բախտակցի լուսանկար...

Քանի՛-քանի անգամ, երբ դպրոցից ինձ տուն էին ուղարկում՝ թոշակը վճարած չլինելուս համար, և ես, սենյակի մի անկյունը քաշված, ինձ զգում էի որբ ու մենակ ամբողջ աշխարհում, այդ փոքրիկ լուսանկարը գալիս էր հիշեցնելու, որ ես սխալվում եմ, որ այնտեղ նույնպես, այն անծանոթ հեռվում, կա ինձ նման մերժված մի բախտընկեր: Եվ նրանցից բացի, կան հազարներ ինձ նման, նրա նման...

Մի օր հանկարծ հայրս ինձ հարցրեց.

— Իվանդ ի՞նչ արիր:

— Պահել եմ,— ասացի ես և այդ օրվանից անանուն լուսանկարն ունեցավ իր անունը: Այդ օրվանից ես իմ մենակ րոպեներին նրա հետ խոսելիս դիմում էի նրան Իվան անունով:

Անցան տարիներ: Ես բոլորովին մոռացա հորս հարցն ու իմ պատասխանը և ինձ համար մնաց հանելուկ, թե ես որտեղի՞ց գիտեմ այդ ռուս տղայի անունը: Հայրս մեռել էր, նրան հարցնել չէի կարող: Մայրս, վշտերից պառաված, մոռացել էր անցյալի բոլոր մանրամասնությունները: Միայն հետագայում, երբ ես արդեն սովորել էի ռուսերեն լեզուն և արդեն գիտեի, որ «Իվանը» ռուսի հավաքական անունն է, ես հանկարծ հիշեցի ամբողջ պատմությունը: Այժմ, երբ փոխվել էր թե՛ իմ և թե՛ նրա բախտը, ես բուռն ցանկություն ունեի տեսնել նրան, ցույց տալ նրան իր լուսանկարը, խոսել նրա հետ իմ և իր տխուր մանկության մասին.. .

5

Երբ սրանից հինգ տարի առաջ Մոսկվան ինձ էլ ընդունեց իր հարյուր-հազարավոր ուսանողների շարքը, երբ ես ուսանող դարձա իմ սիրած ինստիտուտում, ես հաճախ էի նայում ընկերներիս դեմքերին՝ «Իվանին» գտնելու հույսով: Ես գիտեի, ես կասկած անգամ չունեի, որ նա այնտեղ էր, նույն քաղաքում, գուցե և մեր ինստիտուտում, գուցե և նստած էր իմ կողքին: Առաջին ամիսներին, դեռ պարզ ու միամիտ, ես հաճախ էի պատմում իմ ռուս ընկերներին Լազարյան ճեմարանի պատմությունը, հուսալով, թե կգտնեմ նրան, իմ վաղեմի բախտակցին: Նրանք նույնպես, իրենց հերթին, պատմում էին իրենց կյանքի տխուր պատմությունները, բայց Լազարյան ճեմարանի մերժված երեխան չկար նրանց մեջ.. .

Հետո, սակայն, ես գլխի ընկա, որ անհնար է, որ ես չեմ կարող գտնել մեն մի հատիկ «Իվանին» բովանդակ Խորհրդային Միության մեծ օվկիանոսի մեջ... Եղավ մի վայրկյան, որ ես տխրեցի այդ բանի համար: Իսկ հետո, երբ մտածեցի, իմ ժպտալը եկավ իմ միամիտ տխրության վրա: Իվանը, իմ մանկության բախտընկերը, իհարկե, այդտեղ էր՝ Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի, Տաշքենդի, Թիֆլիսի, Երևանի ինստիտուտներում: Նա նստած էր իմ կողքին, մյուսների կողքին: Մեր բոլորի, բոլորի ճակատի վրա մի ժամանակ մակագրված էր եղել՝ մերժված է, իսկ այժմ ջնջվել էր այդ ճակատագիրը: Մոսկվայում, Մինսկում, Բաքվում, Երևանում, նույնիսկ, ամենափոքրիկ ավանների ու գյուղերի տարրական դպրոցներում, մենք, մեծ հայրենիքի բոլոր մերժվածներս, արդեն ընդունվել էինք և հանդիպել իրար...

1935